

**ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ-Ի ԿԱՅՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ
ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 08.09.1992թ. որոշմամբ, գրանցման համար՝ 50, վկայական թիվ 0154), այսուհետ՝ Բանկ, ցանկացած անձի (այսուհետ՝ Հաճախորդ) առաջարկում է սույն պայմաններն ամբողջությամբ ընդունելու դեպքում Visa, MasterCard/Maestro և ԱրՔա վճարային քարտի գործածմամբ կատարելու կոմունալ ծառայությունների դիմաց վճարում:

1. ԿՈՄՈՒՆԱԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

1.1. Հաճախորդը կարող է Բանկի կայքում առցանց վճարել հետևյալ կոմունալ վճարները՝

Beeline
Orange
VivaCell
Էլեկտրաէներգիա
Գազ
Գազ սպասարկում
Ջուր
Ucom
Ռոստելեկոմ

2. ԿՈՄՈՒՆԱԼ ՎՃԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

2.1. Հաճախորդը կարող է կոմունալ վճարների կատարումն իրականացնել Բանկի կայքում առցանց **Visa, MasterCard/Maestro** և **ԱրՔա** վճարային քարտի գործածմամբ:

2.2. Կոմունալ վճարումների կատարման համար Հաճախորդը պարտավոր է ճիշտ, ամբողջական ու պատշաճ կերպով լրացնել Բանկի կողմից պահանջվող տեղեկությունը և իր վճարային քարտի պահանջվող տվյալները՝ ներառյալ վճարման ենթակա գումարը:

2.3. Լրացված տեղեկությունների ճշտության համար պատասխանատվություն կրում է Հաճախորդը:

2.4. Բանկը Հաճախորդից միջնորդավճար չի գանձում կոմունալ վճարների կատարման համար:

2.5. Բանկը պատասխանատվություն չի կրում կոմունալ բազաներում արտացոլված և վճարման ենթակա Հաճախորդի կոմունալ պարտքերի հաշվարկման և չափի համար, այլ արտացոլում է կոմունալ ծառայությունը մատուցող կազմակերպության կամ վերջիններիս միջնորդների կողմից տրամադրված տվյալները:

3. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Հաճախորդի կողմից կոմունալ վճարների կատարման համար բոլոր անհրաժեշտ գործողությունները պատշաճ կատարելուց հետո վճարները փաստացի կատարվում են առավելագույնը 1 ժամվա ընթացքում:

3.2. Տեխնիկական խնդիրների, կապի կամ այլ խափանումների դեպքում Բանկը կոմունալ ծառայությունների վճարների փոխանցումն իրականացնում է տեխնիկական խնդիրների, կապի կամ այլ խափանումների վերացումից հետո հնարավորինս սեղմ ժամկետներում դեպքում:

4 ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն Պայմաններից բխող բոլոր վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Հաճախորդի մոտ ծագած հարցերի դեպքում Հաճախորդը կարող է դիմել Բանկի՝ Հաճախորդների սպասարկման կենտրոն (+374 10) 56 11 11 հեռախոսահամարով:

ԵԹԵ ԴՈՒՔ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՔ ԲՈԼՈՐ ՎԵՐՈԳՐՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԵՏ, ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՍԵՂՄԵԼ «ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ ԲՈԼՈՐ ՎԵՐՈԳՐՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ ԴՐԱՆՑ ՀԵՏ ՀՂՈՒՄԸ»: